Լեռնակերտ

Վարչական ղեկավար՝ Հովհաննես Հարությունյան

Հեռ: 077 95 90 17

Մակերես՝ 32,2կմ^2

Բնակչություն՝ 1400

Ինդեքս՝ 3002

lernakertgp@mail.ru

Շիրակի մարզի Լեռնակերտ համայնքը հիմնադրվել է 1840 թվականին Մուշից և Ալաշկերտից եկած գաղթականների կողմից: Գյուղի նախկին անվանումը եղել է Սիրվանջյուղ, 1956 թվականին վերանվանվել է Լեռնակերտ: Գյուղը գտնվում է Արթիկ համայնքից 10 կմ հարավ՝ Արագած լեռան արևմտյան լանջին, մարզկենտրոնից 35 կմ, մայրաքաղաքից 120 կմ, պետական սահմանից՝ 40 կմ հեռավորության վրա: Գյուղում կա 4-րդ դարի եկեղեցի, հարավային և հարավարևելյան մասերում առկա են կիկլոպյան «Վարի Բերդ» և «Վերի Բերդ» ամրոցներ, դրանց շրջակայքի բնակավայրերը և դամբանադաշտերը, Մեծ Եղեռնիզոհերի և հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններ, Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված հուշարձան կոթող: 2006թ. կառուցվել է նոր եկեղեցի: Գյուղը գտնվում է բարձրադիր գոտում, լեռնատափաստանային ենթագոտում, որին բնորոշ են խիստ բնակլիմայական պայմանները, տարածքի ռելիեֆը հիմնականում լեռնային է՝ կտրտված ձորակների

լայնցանցով: Ըստ հանրապետության տարածքի կադաստրային շրջանցման, գյուղը գտնվում է Ապարան-Հրազդան գնահատման շրջանում, իսկ ագրոկլիմայական շրջանցմամբ Շիրակի չափավոր ցուրտ, խոնավությամբ թույլ ապահովված գոտում: Բնակչությունը զբաղվում է հողագործությամբ, անասնապահությամբ: Բնակչության մոտ պահպանվում են հին հայկական ավանդույթները: https://hushardzan.am/archives/7457